ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 31 մայիսի 2013թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի
Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի
Վ. Պողոսյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Թամարա Սարգսյանի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Քաղաքացի Թամարա Սարգսյանը 13.05.2013թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ վիճարկելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» 1999թ. ապրիլի 14-ի ՀՀ օրենքի (շարադրված նոր խմբագրությամբ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» 2011թ. հունիսի 23-ի ՀՕ-247-Ն օրենքով) 6-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականությունը:

2. Վիճարկվող դրույթի հակասահմանադրականության վերաբերյալ դիմողը ներկայացնում է հետեւյալ հիմնավորումները. «... վիճարկվող օրենքը չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին: Օրենսդիրը «պետական գրանցման իմացության եւ գրանցված իրավունքների հավաստիության կանխավարկածի» սկզբունքը սահմանելով, գործադիրը եւ դատական մարմինները դրանով առաջնորդվելով եւ այն կիրառելով, խախտում են իրավական որոշակիության սկզբունքը՝ դրանով իսկ խախտելով նաեւ անձի սեփականության իրավունքը եւ օրենքի ուժով սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիքը»:

Դիմողի պնդմամբ. «... գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին իրականում տեղեկացված չլինելու պարագայում տեղեկացված համարվելու դեպքում ինքը զրկվել է նաեւ իր սեփականության իրավունքի խախտումը վերացնելու եւ խախտված իրավունքը վերականգնելու դատական պաշտպանության հնարավորությունից եւ արդար դատաքննության արդյունավետ երաշխիքներից»:

3. Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ՝

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողն սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ մասի եւ 69-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Քաղաքացի Թամարա Սարգսյանի անհատական դիմումով գործն ընդունել քննության:
2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

31 մայիսի 2013 թվականի
ՍԴԴԿՈ/2-15